ԶԻՆԱԴԱԴԱՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՆԵՐԿԱՅԻՍ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԽՆԴԻՐՆ Է

Սեպտեմբերի 13-ին կայացած բրիֆինգում ՀՀ նախագահի մամլո քարտուղարի պաշտոնակատար Լեոն Ջուրաբյանը հայտարարեց, որ սեպտեմբերի 8-ին եւ 9-ին Մոսկվայում կայացած խորհրդակցական հանդիպումները զինադադարի ամրապնդման գործընթացի կարեւոր փարը են: Նրա խոսքերով, Հայաստանը խաղաղության հաստատման ներկա փուլում ամենակարեւոր խնդիրն է համարում անանխադեպ 4-ամսյա զինադադարի ամրապնդումը եւ կոչ է անում հակամարտող կողմերին եւ միջնորդներին կենտրոնանալ խաղաղության գործընթացն անշրջելի դարձնելու խնդրի լուծման վրա: Լ. Ջուրաբյանի խոսքերով, Մոսկվայի հանդիպումների շարքը Տեր-Պետրոսյանի, Ալիեւի, Կոզիրեւի ու Քոչարյանի միջեւ պետք է դիտվեն այն համատեքստով, որ հակամարտող կողմերը հոգնել են պատերազմելուց եւ պատրաստ են կոնֆլիկտի խաղաղ լուծմանը: Ըստ Ջուրաբյանի, հանդիպումների ժամանակ կողմերը շարադրել են իրենց դիրքորոշումը եւ համաձայնել երկու խնդրի շուրջ. 1. Հաստատել զինադադարը պահպանելու կողմերի պատրաստակամությունը եւ անել առավելագույնը այն ամրապնդելու համար: 2. Ակտիվացնել բանակցությունները մեծ քաղաքական համաձայնագրի մշակման ուղղությամբ: Դրա հետ մեկտեղ, դեռ չի լուծված բոլոր կողմերի համար ընդունելի բանաձեւ Լաչինի վերաբերյալ: Չեն համաձայնեցված նաեւ բաժանարար ուժերի կազմի, ՄԱԿ-ի եւ ԵԱՀԿ-ի դիտորդների մասնակցության չափի, բաժանարար ուժերին տրվելիք մանդատի հարցերը: Լ. Ջուրաբյանը ձեւակերպեց Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի հանրապետության դիրքորոշումը Լաչինի հարցում, ցանկացած դեպքում պետք է երաշխավորվեն Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի միջեւ հաղորդակցության անվտանգությունն ու անխափանությունը: Որպես խաղաղ գործընթացի առաջխաղացման ապպցույց պ. Ջուրաբյանը հիշատակեց, որ բոլոր կողմերը (թե հակամարտության մասնակիցները եւ թե միջնորդները) արդեն ընդունում են բաժանարար ուժերի անհրաժեշտությունը: Համաձայնագրի նախագծում արդեն համաձայնեցված են բազմաթիվ հարցեր, մասնավորապես, վեց զբաղեցրած շրջաններից ղարաբաղյան ուժերի դուրսբերման, ապաշրջափակման եւ փախստականների վերադարձի հարցերը եռափուլ ժամանակացույցի սահմաններում:

ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ